



Թնամաբար է վերաբերվում զէպի իզական բարձրագոյն, համարաբանական կրթութիւնը: Քրանսիացին ծաղրում, հալածում է մի կնոջ, որ համարձակվում է Փարիզի մի բարձրագոյն դպրոցում, օրինակ, բժշկական դպրոցում դասախօսութիւններ լսել և յանգնում է բժշկութեան գիտութիւններից դոկտորի քննութիւն տալ: Այլ ևս աւելորդ է խօսել գիտութիւնների միւս ճիւղերի մասին, օրինակ իրաւաբանական գիտութեան մասին, և այլն:

Կինը Քրանսիայում մի խաղաղ է, մի սեփականութիւն է, մի գեղեցիկ աւարկայ է, մի զարդարանք է, բոլոր իրաւունքներից զուրկ մի ստրուկ է:

Քրանսիական գիտութիւնն էլ նրա գրականութիւնը, լրագրութիւնը, բովանդակ է բեմը, եթէ զբաղվում էին կանանցով, վերաբերվում էին զէպի կնոջ գրութիւնը վայրի վերոյ, թեթեւ կերպով, կամ եթէ յանձն էին առնում պաշտպանել կանանց սեռի դատը, իրանց ամբողջ ուշադրութիւնը դարձնում էին ընկած, հասարակաց կանանց դրութեան վրա, բայց չէին նայում կնոջ վրա քաղաքական իրաւունքի կէտից:

Միայն վերջին ժամանակները լոյս են սկսում տեսնել Քրանսիայում այնպիսի հեղինակութիւններ, ինչպէս Էմիլ-Ղը-ժի-րարդէնի և Ալէքսանդր Դիւմայի գրուածները, որոնք փորձ են

փորձում պաշտպանել կանանց դատը թէ ուսման և թէ իրաւունքի հաւասարութեան կէտից:

Գ. Ա.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՐԱՊՈՒՅՐԻՆ

Թիֆլիս, յունվարի 28-ին  
Յունվարի 28-ին, «Մշակի» առաջնորդող յորուածում, դուք, քննելով յունվարի 25-ին, Հայոց Բարեգործական ընկերութեան կանոնադրութեան ծրագրի քննելու առթիւ ժողովուածների կայացած նիստը, մի քանի անգամ կծու խօսքերով յիշեցնում էք ընթերցողներին իմ անունս, անունս, որ որքան յիշում է մեր պատուելի հայ հասարակութիւնը, մամուլի մէջ առաջին անգամն է ենթարկվում այսպիսի դրոյցներին: Երբի այս այն պատճառաւ, որ ևս կեանքիս մէջ առաջին անգամն եմ վստահանում հինուարի լինել մի «Հայոց Բարեգործական» ընկերութեան անունով:

Յունվարի 25-ի ժողովը երկրորդն էր, յունվարի 4-ի, առաջին ժողովից յետոյ:

Ձեր յորուածը բաժանում եմ երկու մասի: ա. ընդհանուր դատողութեանց, վերաբերեալ «առանց կրօնի խորութեան» խօսքերին. բ. ամբողջապէս վերաբերեալ ինձ, իբրև նախագահի և փոքր ինչ ներքի լինի այսպէս կարծել, իմ անձնաւորութեանս: Ընդհանուր դատողութեանց վերաբերեալ եմ բանակարէն չեմ մտնի ձեզ հետ: Հայոց Բարեգործիւնը այդ հարցերով բնութագրվում է, անա երկրորդ տարին ես: Յիրաւ է, ես եղել եմ երբեմնապէս աշխատակից «Մշակի» — այդ ինձ պատիւ համարելով: յիրաւ է, իրաւունք ունէր նոյն իսկ «Մշակը» և ընթերցող հասարակութիւնը (ինչպէս ինձ անձամբ ասում էին շատերը թիֆլիսում և շատ շատերը Երևանում և մասնաւոր Վարդապետում) սպասել իմ գործիցը ես մի քանի խօսք այդ հայ աղիւղութեան կենսական հարցի վերաբերութեամբ, բայց ես միանգամայն չեմ ունեցել ոչ պատիւ և ոչ անպատուութիւն խառնուել այդ վիճարանութեանց մէջ: Այսօր ինձ ակամայ կամօք չիտ-

թում էք այդ գործին ասելով: «Այդ ճշմարտութիւնը (?) հասկացել էր յիսուներորդ թուականների Գորգատի ուսանող, «Մարդասիրական ընկերութեան» հիմնող բժիշկ Ռոստոմանց, բայց նոյն ճշմարտութիւնը (?) անկարող եղան հասկանալ մեր ժամանակի լուսաւորված բժիշկ Նաւասարդեանց և 1881 թւին ժողովի մէջ մասնակցող ցիլինդրաւոր երիտասարդութիւնը»: Ճշմարտութիւնը զանազան տեսակ են հասկանում զանազան անձինք, բայց թէ «անկարող եղաւ հասկանալ բժիշկ Նաւասարդեանցը, այդ մի, բոլորովին, անտեղի ոճ է: Ես ի սրտէ տօնում եմ բժիշկ Ռոստոմանցի սուրբ յիշատակը և չեմ դարձնում, որ այդ հարցում (խկապէս այդ ձևում) դուք կարող էիք համամիտ լինել նրան, բայց այդ Ձեզ իրաւունք չէ տալու կապակցել իմ մտաւոր կարողութիւնս այդ ճշմարտութիւնը (?) հասկանալու գործում»:

Իմ անձնաւորութիւնս շօշափում էք ասելով նախագահը, որ բժիշկ Նաւասարդեանցն էր, այնքան թոյլ գտնուեցաւ — որովհետեւ մենք չէնք կամենում ընդունել որ նա կողմնապէս էր և զաղտնի կերպով համամիտ առաջարկողներին: Ենթադրեալ եմ, որ չէք կամենում ընդունել իմ «զաղտնի կերպով» — բայց մտաբերեցէք այն, որ յառաջ քան ծրագրի կարգաւ հասարակութեան առաջ, ես երես առ երես վիճարանութիւն ունեցայ Ձեզ հետ նոյն իսկ այդ «առանց կրօնի խորութեան» խօսքերին վերաբերեալ և բացարձակ յայտնեցի, որ «այդ խօսքերը ես և չեմ մտցնել ի կանօնադրութեան մէջ, որ ու վճիտ ետ աւելուրդ արան լինի թէ ոչ»:

Այդ թող լինի Տայը: Ես բժիշկ Նաւասարդեանս, առ յախտեան հայ լուսաւորչական լինելով, ցանկանում եմ որ «Հայոց Բարեգործական» կանօնադրութեան առաջ հաւատար լինեն հայ երբեցանակներում եմ որ բոլոր հայ արիւն կրողները միապէս հարազատ որդիք լինին հայ աղիւղութեան զաղափարի առաջ:

Ես միշտ գործով օգնել եմ հայերին անխափ — իբրև մարդ, իբրև բժիշկ, վկայ է նոյն իսկ պ. Ամիրխանեանցը, Մարտիրոս Յրտատարեանցը և այլ այլաբանանք, բայց, կանայք և երեխայք օգնել եմ այն հայերին, որոնք դուք թանաքով էք օգնում:

Ջարմանալի մարդ էք, աշխատում էք իմ վրիցս կապել այն, ինչ որ ես չեմ երազում:

Ինչ որ վերաբերում է այն կէտին, թէ «Յունվարի 25-ի ժողովը նախագահը բոլորովին անընդունակ եղաւ հասկանալ իր պաշտօնի նշանակութիւնը, ես միայն այս կասեմ, որ նոյն անձն էր նախագահում և յունվարի 4-ի ժողովին, որը այն օրը անընդունակ էր և չէր կարող ընդունել (նրան ընդունել տուեցին) ծրագրի մէջ «առանց կրօնի խորութեան» խօսքերը: Բայց «ես սր մեր և բոլորին որ երկրորդ ժողովին նախագահ է ընտրվել ն ուր քան իմ ինքս» — իմ կարծիքով իմ մէջ, զիտեմ, որ յարգելի հասարակութիւնը ինձ ընտրեց նախագահ, դրանով իր պատիւը արտայայտելու: Համար ընկերութեան հիմնադրին: Ես սր մեր և զայն ժողովին երեսուցի պէտք է վարժուած լինել ընդունակութեամբ վարել այդ պաշտօնը: Բայց ընդունակութիւն ունիմ հասկանալու այս միայն, որ երկրորդ ժողովը ն ուր նախագահ ընտրելով (պատահմամբ ինձ) իրաւունք տուեց իրան կնիքակրել ն ուր նախագահ է ընտրող ժողովին ձայնելու մեծամասնութեան վճռոյն, չը նայելով անգամ, որ նախագահը պարզ և որոշ խօսքերով արտասանեց որ նա ի բրան իր աւելուրդ չէ տալիս վերաքննելու իմ և հարցը:

Յիրաւ է, դուք մի փորձ էք փորձում ասել ձեր ընթերցողներին թէ՛ «Միւսն որ անդամները քիչ էին (?) մի քանի մարդիկ օգուտ քաղեցին, որպէս զի առաջարկին նորից վերաքննել առաջին ժողովի մի վճիռ, այն է՝ որ ընկերութիւնը պէտք է լուսաւորութիւնը տարածէ հայերի մէջ, առանց կրօնի խորութեան»:

Բայց անդամները երբ քիչ էին, այլ առաջին ժողովից շատ էին, հարկը հոգուց պահաւ չէին, նոյն նախագահը առաջարկեց քուէարկութեան մի հարց՝ «ինդիւլժով ոտքի կանգնել նրանց, որոնք կամենում են պահպանել ծրագրի մէջ առանց խորութեան խօսքերը»: Կանգնեցին միայն 19 հոգի, որոց տասնինըրորդը այդ ոտքի առաջարկող պարտական մի որոշ ընտարութիւն ունի, մի որոշ ընթերցող ունի բռնած իր կեանքումը: դուք, եթէ դուք լինէիք իմ տեղս նախագահ, այլապէս վարուէիք, բայց ես, իբրև

նեղուն պէս այդ նիստի մէջ իսկոյն վիճարանել և քուէարկել տալ, այլ պէտք է այնքան զգոյշ լինէիք և պատեհէք նոյն իսկ ձեր նախագահական պաշտօնը, եթէ ձեզ համար անհատի համոզմունքը և ամբողջ առաջին ժողովի վճիռը ոչինչ նշանակութիւն չունի, որ գոնէ սպասելէք մինչև որ դատաւար մի քանի քննիչներ կարողանան, իր դատը կարողութեան չափ պաշտպանելու համար, կամ գործ դնէիք ամեն քիչ թէ շատ իրան յարող ժողովում ընդունված սովորութիւնը: — որ ամեն նոր յարուցվող հարց, կամ արդէն վճարված հարց, որին կամենում են նորից քննադատութեան ու նորից քուէարկութեան ենթարկել, որինմ դարձեալ սկզբունքով ն ուր հարց, ներկայ նիստի մէջ միայն արձանագրվում է, իսկ նրա քննիչները և վճարված թողնվում է միւս նիստին, որպէս զի առաջարկութիւն անողը, կամ քննադատութեան ենթարկողը հնար ունենայ ներկայ գտնվել, եթէ ներկայ չէ, պատրաստվել, եթէ պատրաստ չէ: որպէս զի վերջապէս ամբողջ ժողովը էլ պատրաստվի: Կամ ամեն ժողովների նախագահական անընդհանրաբար յարտաւորութիւնն է, պարլամենտներից սկսած, մինչև մեր դուռն և մեր ուսումնական ընկերութիւնները: Այդ անուանվում է նախագահ լինելու ընդունակութիւն, կամ անընդհանրութիւն, կողմնապահութիւն, կամ անկողմնապահութիւն, նախագահելու արձեատի հմտութիւն, կամ անկարողութիւն: Այդ տեսակ բաներ մարդիկ սովորում են, ինչպէս սովորում են ամեն ուրիշ հմտութիւններ: Նախագահի անթոռի վրա նստելով մարդ զեռ նախագահ չէ, նախագահելու կարողութիւնը բնածին չէ լինում մարդու մէջ, ինչպէս բնածին չեն և մեր ուրիշ հմտութիւնները:

Վրժմ դիմում եմ ձեր գրուածքի ուրիշ կէտերին, յիշեցնելով յունվարի 25-ի ժողովի որոշումը: Եթէ մի ֆելիտոսիստի ասած խօսքը կարող է որդիկ ամբողջ ինտելիգենցիան հասարակութիւնը ջգր ու հակառակ վարվել ֆելիտոսիստի ասածին, — դա չափից դուրս մեծ պատիւ է ֆելիտոսիստին, որին այդքան նշանակութիւն, այդքան անապին ոյժ էք յատկացնում: Այդ մանկական կարծիքը ես որ և է իմ կողմից կրկնակայից ստոր եմ համարում: Եթէ այդ փաստը ուղիղ լինել, որքան տխուր համոզմունք ես պէտք է կազմել ինտելիգենցիայից բաղկացած հասարակութեան մասին... Երևակայեցէք, որ մի լրագիր տարիներով առաջարկում է ջրանցք լինել մի քաղաքում: Վերջապէս քաղաքային վարչութիւնը վճռում է՝ ջրանցքը անցկացնել: Այդ անցքից յետոյ լրագրի ֆելիտոսիստը պարծնում է, կանխում է՝ յայդ թ ու թ իւր... Եւ ինչ կասէք, եթէ դրանից յետոյ, դուռն, գումարվելով հետեալ նիստին, ֆելիտոսիստի ասածից վրդովվելով, փոխել իր վճիռը և ֆելիտոսիստի ջգր ու ջգր կերպ ամբողջ քաղաքը նրա համար անհրաժեշտ ջրից: Թէ դուք սիրում էք հայերին, սիրում էք ամբողջ ազգը, ինչ կրօնին և պատկանելին հայերը, միայն թէ հայ արեւն հոսել նրանց երակներում, — այդ ձեռք բանն է և այդ տեսակ զգացմունքի մասին ձեր մէջ ես երբէք չեմ կասկածել: Բայց այդ տեսակ զգացմունք լով խօսքերով չեն ապացուցանում: Ձեր այդ զգացմունքը աւելի որոշ կերպով կարտայայտվել մի ընդհանուր հայոց բարեգործական ընկերութեան ծրագրի մէջ, որից դուք ընդհակառակն աշխատել էք հանել «առանց կրօնի խորութեան» խօսքը, քան թէ նրանով, որ դուք որպէս բժիշկ բժշկել էք Յրտատարեանցին և Ամիրխանեանցին, որոնք բողոքական հայեր են: Ինչպէս ռուս, վրացի, գերմանացի, հրէայ բժիշկ բժշկում է ամեն հիւանդին, որ կարող է նրա օգնութեան, առանց նրա դատանութեան մասին հարցնելու զեղը տալուց առաջ, նոյնպէս էլ հայ բժիշկը պէտք է վարվի, իմ կարծիքով: Այդ երկ պակաս, որ հայ լուսաւորչական բժիշկը բողոքական հային չը բժշկէր, երբ նրան կանչում են,

կրթութիւնը ջգր ու հակառակ վարվել ֆելիտոսիստի ասածին, — դա չափից դուրս մեծ պատիւ է ֆելիտոսիստին, որին այդքան նշանակութիւն, այդքան անապին ոյժ էք յատկացնում: Այդ մանկական կարծիքը ես որ և է իմ կողմից կրկնակայից ստոր եմ համարում: Եթէ այդ փաստը ուղիղ լինել, որքան տխուր համոզմունք ես պէտք է կազմել ինտելիգենցիայից բաղկացած հասարակութեան մասին... Երևակայեցէք, որ մի լրագիր տարիներով առաջարկում է ջրանցք լինել մի քաղաքում: Վերջապէս քաղաքային վարչութիւնը վճռում է՝ ջրանցքը անցկացնել: Այդ անցքից յետոյ լրագրի ֆելիտոսիստը պարծնում է, կանխում է՝ յայդ թ ու թ իւր... Եւ ինչ կասէք, եթէ դրանից յետոյ, դուռն, գումարվելով հետեալ նիստին, ֆելիտոսիստի ասածից վրդովվելով, փոխել իր վճիռը և ֆելիտոսիստի ջգր ու ջգր կերպ ամբողջ քաղաքը նրա համար անհրաժեշտ ջրից: Թէ դուք սիրում էք հայերին, սիրում էք ամբողջ ազգը, ինչ կրօնին և պատկանելին հայերը, միայն թէ հայ արեւն հոսել նրանց երակներում, — այդ ձեռք բանն է և այդ տեսակ զգացմունքի մասին ձեր մէջ ես երբէք չեմ կասկածել: Բայց այդ տեսակ զգացմունք լով խօսքերով չեն ապացուցանում: Ձեր այդ զգացմունքը աւելի որոշ կերպով կարտայայտվել մի ընդհանուր հայոց բարեգործական ընկերութեան ծրագրի մէջ, որից դուք ընդհակառակն աշխատել էք հանել «առանց կրօնի խորութեան» խօսքը, քան թէ նրանով, որ դուք որպէս բժիշկ բժշկել էք Յրտատարեանցին և Ամիրխանեանցին, որոնք բողոքական հայեր են: Ինչպէս ռուս, վրացի, գերմանացի, հրէայ բժիշկ բժշկում է ամեն հիւանդին, որ կարող է նրա օգնութեան, առանց նրա դատանութեան մասին հարցնելու զեղը տալուց առաջ, նոյնպէս էլ հայ բժիշկը պէտք է վարվի, իմ կարծիքով: Այդ երկ պակաս, որ հայ լուսաւորչական բժիշկը բողոքական հային չը բժշկէր, երբ նրան կանչում են,

միայն այն պատճառով, որ նա բողոքական հայ է: Կարծեմ դուք նոյնքան եւս անդ ու վ կը բժշկէիք մի հայ բողոքականին, որքան մի գերմանացի թողոքականին, եթէ ձեզ նրա մօտ, որպէս հիւանդի մօտ կանչէին: Իսկ եթէ դա անխաղաղութիւն է, որ դուք նրանց ձրի էք բժշկել, որովհետեւ նրանք հայեր են և դրանով կամենում էք ձեր ազգասիրութիւնը ցոյց տալ, մի և նոյն ժամանակ այդ անխաղաղութեամբ ինձ յանդիմանութիւն անելով, որ ես միայն թ անաք ու վ եմ օգնում հայոց ազգին, — ես կարծեմ, որ եթէ դուք մի քանի հարցը (?) հայերին ձրի էք բժշկել ձեր կեանքում, ես էլ 1865 թւից, իմ ասուն և հինգ տարվայ գրականական գործունեութեան ընթացքում, ձրի եմ ուսուցել մի քանի հարցը հայերին: Ձրի եմ ասում, որովհետեւ ձեզ յայտնի է, որ հայ պարբերիցիստը ոչինչ վարձ չէ ստանում իր աշխատանքի համար և բացի ստրանից իր գրականից լրագրի ծախս էլ է ծածկում ամեն տարի: Հայ բժիշկը եթէ ազգասիրելն ձրի է բժշկում, գոնէ հարուստներից փող կարող է ստանալ և ամեն տարի յետ գցել, իսկ հայ պարբերիցիստը իր ամբողջ կեանքի մէջ երբէք այնքան չէ ստանում, որ իրան նիւթապէս քիչ թէ շատ վարձատրված համարի: Թողնեք զեռ բարոյական կողմը, չը խօսեք նրա վրա, թէ հայ հասարակութիւնը ի նչ պէս է ընդունում և ի նչ պէս է վարձատրում պարբերիցիստին բարոյապէս, առանց նիւթապէս էլ վարձատրելու: Բայց ձեզ գուցէ յայտնի է, ճիշտ գիտութեամբ, ստատիստիկայից, որ անհասարակ ընդունելի կեանքի մի ջիւնն է ինքն և ուղղութիւնը և աւելի երկար չէ լինում, իսկ թանջանները ցոյց են տալիս որ քիչ էլ պակաս, քան թէ բժշկի կեանքի միջին տևողութիւնը, այնքան ուրեմն մեծ է լինում պարբերիցիստի մշտական հոգեկան յուզումները, որ նրան անընդհատ կերպով մաշում է: Ուրեմն թ անաք գործածելը նոյնպէս կեանքի զոհ է պահանջում, պարուն

բժիշկ, ուրեմն տեսնում էք, որ պարբերիցիստի գործունեութիւնը նոյնպիսի կեանք է մաշում, նոյնպիսի կեանքի զոհողութիւն է պահանջում, որքան բժշկի գործը:

Ուրեմն ամեն կողմից կ վիտ եմք, պարուն բժիշկ: Ինչ որ վերաբերվում է ձեր արձամարհանքին զէպի թ անաքը կարծեմ որ դուք նոյնպէս թ անաք էք գործածում միշտ ձեր հիւանդներին բեցեպանի գրելու ժամանակ: Ձեր տատարեանցի ու Ամիրխանեանցի բեցեպաններն էլ թանաքով էիք գրել, ինչպէս և ես իմ յորուածները, ի հարկէ երկուսու էլ մեր խնդրի և գիտութեան առաջնորդութեամբ: Կարծեմ ձեր բարեգործ ուրիշ և կանաչ ընկերութեան ծրագրին էլ նոյնպէս թանաքով էք գրել, կարծեմ ձեր բժշկական հմտութիւններն էլ նոյնպէս թանաքովն էք պարտական, որովհետեւ ձեր բոլոր սովորած գրքերը նախ և առաջ, ինչպէս ձեզ յայտնի է, թանաքով են գրված եղել գիտնականներին ձեռքով: Ուրեմն տեսնում էք, որ թանաքը այնքան արձամարհանելի բան չէ, և մասնաւոր մեր դարում, ինչպէս ձեզ յայտնի է, նա բաւական մեծ ոյժ է կազմում: Եւ եթէ դուք թանաքի օգնութեամբ դարձել էք մի ընկերութեան հիմնադրի, որ ուղեւս նոր է ծնվում, — եւ էլ նոյն թանաքի միջոցով դարձել եմ հիմնադրի մի ուրիշ, կարծեմ նոյնքան օգտաւէտ ձեռնարկութեան, այն է մի հայերէն լրագրի, որ արդէն տասն տարի գոյութիւն ունի:

Վերջապէս ինչ որ վերաբերվում է ձեր ինձ տուած քարոզին, թէ պէտք է յարգել այլոց մասնաւոր լուսաւորչական հայերի ազգի մեծ մեծամասնութեան պատճառով: Եւ ես համարձակվում եմ կարծել, որ նոյնպիսի ազգի բան է նոյնպիսի հերոսական և ասպետական յարգելի և փոքր և մասնաւոր թեւաւ պատճառաւ սուրբ խօսքերի միջոցով:

ընկերութեան ծարաւի հիմնադրի, իբրև ծրագրի յօրինողներից մէկը, իբրև անդամ մ ա ս ն ա ժ ո Ղ ո վ ի, իբրև հակամարտ ատանց կրօնի խորութեան» աւելորդ (իսկ կարծիքով) խօսքերի, նախագահութեան պաշտօն վարելով, վայել և արժան չէի համարել ինձ չիտիել բազմութիւնը, ազմուկ պցել ժողովը մէջ, հասարակութեան մէջ, ազգի մէջ:

Անմիջապէս յունվարի 4-ի ժողովից յետոյ, երբ ընդունուեց ատանց դատաւորութիւնների խորութեան» խօսքերը, այդ խօսքերը իբր միամեայ բանակիւնների յաղթութեան պատկ կրելով «Մշակի» ճակատին, կրկնեց նրա ֆելիետօնիստ Ա ս ի ա ց ի ն, առելով՝ «դ ա մ ե ծ յ ա դ թ ու լ թ իւ լ ը ն է, դ ա ժ ա մ ա ն ա կ ի ն չ ա ն է»:

Պէտք է յարգել այլ ո ո ց, մանաւանդ լուսաւորչական հայերի, ազգի մեծ մեծամասնութեան պատուարութիւնը:

Վերանայ անդադար կրկնող «Գուք պ. Գ. Ա.», «Գուք պ. Գ. Ա.» ամեն տեղ թողեցինք միայն հասարակ «Գուք» խօսքը, քանի որ այդ «Գուք» արդէն ինքն իրան վերաբերում է խմբագրի անձնաւորութեանը:

Կիրակի, փետրվարի 1-ին, ինչպէս մեզ խնդրում է յայտնել բժիշկ Նաւատարեան, լինելու է Արծրունու թատրոնում, առաւօտեան 11 ժամին, երբորդ ժողով Բ ա ր ե գ ո ր ծ ա կ ա ն ընկերութեան ծրագիրը քննելու համար:

**ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ԳՆՐՄԱՆԻՍ

Յունվարի 15-ին, ինչպէս հաղորդում են լրագիրները, Բերլինում բացվեցաւ այդպիսի-տնտեսական խորհուրդը Ա.Յ. Կոստանի հիմնադրութիւնը աւելի էլ ծանրաբեռնում է Գերմանիայի և Պրուսիայի պետական մեքենային: Բերլինի մէջ իշխան Բիւմարիի հսկողութեան տակ են գտնվում միացեալ խորհուրդը, օրէնսդրական ժողովը, գերմանական կառավարութեան բոլոր ձեռնարկը, պրուսական մինիստրութիւնը և պրուսական օրէնսդրական ժողովը: Գերմանական կառավարութիւնը այդպիսով շրջապատված է ամեն տեսակ բարեխաջող պայմաններով և նրան լաւ յայտնի պէտք է լինեն Պրուսիայի և Գերմանիայի պետքերը և ցանկութիւնները:

Ամենքին յայտնի է, թէ սահմանադրական պետութիւնների մէջ ինչպէս են կազմվում օրինադիւններ և ինչպէս են քննվում: Եթէ օրինադիւնը մինիստրութիւնն է առաջարկում, նա կարող է հաւաքել անհրաժեշտ տեղեկութիւններ, ենթարկել օրինադիւնը վարչական մասնաժողովի քննութեանը, որ կազմվում է գործին ծանօթ և մասնագէտ անձինքներից: Երբ օրինադիւնը առաջարկվում է պարլամենտին, նա դարձեալ ենթարկվում է պարլամենտական մասնաժողովի քննութեանը: Աստիճանաբար կան բոլոր պետութիւնների մէջ օրինադիւնները այդպէս են քննվում:

Բայց իշխան Բիւմարի սահմանադրական մինիստր չէ, այլ կատարեալ գիկատար: Նա երբէք սահմանադրական կարգի կողմնակից և պաշտպան չէ եղել: Որէնպարական հիմնարկութիւնների ամենախորը ընդդիմադրութիւնը նրա համար միշտ անտանելի է եղել: Թէպէտ տնտեսական և ֆինանսական նրա նախադիւնները վիճելի են, այնու ամենայնիւ նրա համար անտանելի է ենթարկել այդ նախադիւնները պարլամենտի անդամների քննութեանը և վիճարկումը ինքնութիւնը: Նա հիմնեց ազգային տնտեսական խորհուրդը, որպէս զի աւելի մեծ նշանակութիւն տայ տնտեսական իր նախադիւններին և անցոր դարձնէ պարլամենտական ընդդիմադրութիւնը: Այդպիսով նա ձգտում է ստեղծել իր սեփական պարլամենտը, որ կազմված լինի ընդհանուր քաղաքականութեանց հետ մեացող, գործնական մարդիկներից և որի վրա նա կարողանայ հիմնվել պարլամենտական կուսակցութիւնների հետ պատերազմելու ժամանակ:

ՅՐԱՆՍԻՍ

Ներկայումս Ֆրանսիական հին կուսակցութիւնները փոքր առ փոքր սպառվում

և անհետանում են: Թէ արմատական և թէ միապետական կուսակցութիւնները կորցնում են իրանց ուժերը: Այս-Մահաճօնի նախագահութեան ժամանակ միապետական կուսակցութիւնները զուլս բարձրացրին, բայց նրանք չը կարողացան ընդդիմադրել թէ իրանց անմիաբանութեանը և թէ հասարակական կարծիքին: Այդ կուսակցութիւնների վերջնականապէս անհետանալը կախված է հանրապետական կուսակցութեան կենսական ոյժերից և գործողութիւններից:

Կրա հակապատկեր է ներկայացնում անհաշտ և քրի (կոմունարների) կուսակցութիւնը, որ անբաւական են պետութեան և հասարակութեան տնտեսական այժմեան կազմակերպութիւնից: Թէպէտ այդ կուսակցութեան ազդեցութիւնը այժմ չափազանց թույլ է, թէպէտ քաղաքային խորհրդականներին ընտրողները կասկածանքով վերաբերվեցին դէպի նրան, այնու ամենայնիւ նա մի օյժ է, որ կազմված է բազմութիւններից: Այս կուսակցութեան հետ գործ պէտք է ունենայ երկիրը կառավարող հանրապետական կուսակցութիւնը այժմ և մանաւանդ ապագայում: Հանրապետականները իրանց համարում են երկրի այժմեան և մօտաւոր ապագայի ներկայացուցիչներ, անհաշտները աւելի հեռաւոր ապագան իրանց սեփականութիւն են համարում: Քաղաքային խորհրդականների ընտրութիւնները ձգարիտ է հարած հասցրին այդ կուսակցութեանը, բայց նա պահպանում է բացասական իր դրօշակը և սպասում է իր ժամանակին:

Ֆրանսիայի այժմեան ներքին կեանքը կենտրոնացած է հանրապետական և բողոքական (անհաշտ) կուսակցութիւնների կուր մէջ: Առանց կուր և ընդդիմադրութեան կեանք և առաջադիմութիւն չը կայ: Այդ երկու կուսակցութիւնների կուրը նպաստում է ընդհանուր գործի զարգացմանը և հասարակական ինդիւիդիւն մշակելուն: Ֆրանսիական անհաշտ կուսակցութիւնը այն ծառայութիւնն է հասցնում երկրին, որ իր բողոքներով և հակադրութեամբ անհանգստացնում է հանրապետականներին, թոյլ չէ տալիս անգործ մնալ և մանաւոր օգուտներ քաղել իր յաղթութեանից:

Նոյն կուսակցական կուրը պէտք է մեծ ազդեցութիւն ունենայ անհաշտների վրա: Անհաշտները իրաւունքներ կորցրած և հարստված կուսակցութիւն չեն կազմում: Ընդհանուր քուէարկութեանից, խօսքի և ժողովների ազատութեանից, քաղաքական և քաղաքային բոլոր իրաւունքներից նրանք կարող են նոյնքան օգուտ քաղել, որքան որ հանրապետականները: Երբ մի երկիր շրջապատված է այսպիսի պայմաններով հասարակական առաջնակարգ գիրքը ըստացվում է խելքի և տաղանդի օգնութեամբ և ժամանակակից պահանջները լրացնելու շնորքով:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բուխարեստից լրագիրներին հեռագրում են, թէ լուսնական պատգամաւորների ժողովը ընդունեց մի օրինադիւն, որ արգելում է ամեն տեսակ վիճակահարութիւնը: Կառավարութիւնը առաջարկեց ժողովին ֆինանսական բիւրոյները:

Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ Ֆրանսիական սենատը հաստատեց օրինադիւն աւետարական նաւատորմի մասին:

Փարիզից լրագիրներին հաղորդում են, որ շուտով Գաւրեստա մի հացիկայի կը կազմէ պատգամաւորների ժողովը: Նորընտիր փոխ-նախագահներին և Փարիզ հասած զօրաբաժինների հրամանատարներին պատուելու համար:

Հոսովից հեռագրում են, որ յունվարի 16-ին այնտեղ հասան իտալական թագաւորը ու թագուհին, որոնց ընդունեցին մինիստրութեան անդամները և ժողովուրդը անազն բազմութիւն:

Բերլինից լրագիրներին հաղորդում են, որ յունվարի 16-ին գերմանական պատգամաւորների ժողովը քննում էր Բիխտերի առաջարկութիւնը տուրքերի քանակութիւնը մշտապէս 14,000,000 մարկով փոքրացնելու մասին: Ֆինանսները մինիստրը յայտնեց, որ պետութեան գրամական գրութիւնը շատ գեղեցիկ է, որ կայսերութեան կկամուտները հետզհետեւ աւելանում են: Ուրեմն տուրքերի քանակութիւնը կտրուի է փոքրացնել, առանց վնասելու բիւրոյսին: Կառավարութիւնը սկզբունքով համաձայն է Բիխտերի առաջարկութեան հետ, որովհետեւ ինքը նոյն բանն աչքի առաջ ունէր:

**«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ**

Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Տ

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յունվարի: «ԴՈՒՍԵՆ» լրագրին հաղորդում են Սամարալից յունվարի 27-ից, որ հացի գինը ընկնում է: Այլերի պուրը արժէ 1 ր. 36 կ., շրջակաների մէջ, երկաթուղու գծի վրա ամեն տեղ հացի գինը փոքրանում է: Պահանջ չը կայ և հացը հաւաքում են աւերակների մէջ: Բուզուլուսի մէջ այլերի պուրը արժէ 1 ր. 16 կ., Բուզուլուսի մէջ 1 ր. 29 կ., Սիդրանի մէջ 1 ր. 24 կ., Աստրախանի մէջ 83 կ., Վերնետուրակի մէջ 1 ր., Նյագուրի մէջ դեկտեմբերի 9 ր. 80 կ., Որենբուրգի մէջ պուրը 1 ր. 38 կ., Չլատուստի մէջ 90 կ., Չելաբինսկի մէջ 67 կ., Ստերլիտանսկի մէջ 1 ր. 15 կ.:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 28 յունվարի: «ԴՈՒՍԵՆ» լրագրին խորհովից հաղորդում են, որ տեխնոլոգիական ինստիտուտը կը բացվի սեպտեմբերի 1-ին: 10ՆՎՕՆ, 28 յունվարի: Կիլի յայտնեց համայնքների ժողովի մէջ, որ երէկ Ֆրանսիական և անգլիական նաւերը հրաման ստացան դուրս գալ Տունիսից: Համայնքների ժողովը երկրորդ ընթերցանութեանից յետոյ ընդունեց իրականական ստիպողական օրէնքները:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 29 յունվարի: Երէկ երկրային վախճանվեցաւ Ֆէօթօր Գոստօվսկի հեղինակը: «ԴՈՒՍԵՆ» լրագիրը հաղորդում է, որ չինական դեսպանատանը յոյս ունեն, որ նոր դաշնագիրը շուտով կը կապվի և անյապաղ Պեկին կուղարկվի:

Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳ, 27 յունվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 221 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր., երկրորդ 92 ր., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 84 կ.: Ռուսաց 1 ր. 16նոյնի վրա արժէ 25,12 պէս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 214 1/4 մարկ, Փարիզի վրա 265 1/2 ֆրանկ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

